

**ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ե.Լ. Հովսեփյան,

*Ն.Վ. Գոգոլի անվան 35 հիմնական դպրոցի
ֆիզկուլտուրայի ուսուցիչ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Ֆիզիկական և զինվորական դաստիարակություն, հայ մտավորականներ, երեխաների համակողմանի զարգացում, ազգային ավանդույթներ:

Հետազոտության արդիականություն: Դարեր ի վեր մարդկությունը հումանիստական գաղափարներ է սերմանել երեխաների մեջ և, պատահական չէ, որ անձի դաստիարակությունն ամեն մի հասարակության սոցիալական, հոգեբանական, մանկավարժական կարևորագույն հիմնախնդիրներից է: Պատահական չէ, որ ներկայումս լայնորեն տարածված է այն դրույթը, որ հասարակության հետագա զարգացման վիճակը և կուլտուրան ամբողջությամբ պայմանավորված է ոչ միայն նրանով, թե կրթության վերջնարդյունքում սովորողներն ինչպիսի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք կբերեն, այլև ինչպիսի սոցիալական, բարոյական, համամարդկային արժեքների կտիրապետեն: Դպրոցը և մանկավարժությունն ընտրում են բարոյական մշակույթի մատչելի տարրերը և ստեղծում են

անձնավորության բարոյական դաստիարակության ծրագրերն ու պլանները, որոնցում առաջին պլան են մղվում մարդկանց նկատմամբ բարձրաբարո վերաբերմունքի (ազնվության, շիտակության, մարդասիրության, բարեկամության և այլն) դրսևորումները, հայրենասիրական, քաղաքական և իրավական կուլտուրայի, կարգապահության և պատասխանատվության դաստիարակումը [8]:

Ներկայումս մանկավարժներին, ծնողներին և ընդհանրապես հասարակությանը մտահոգում է այն հանգամանքը, որ դեռևս անցած դարի վերջերից քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմանների վատթարացումից Հայաստանի դպրոցներում խախտված է սովորողների բարոյագեթեանական, մանկավարժական և դաստիարակչական չափանիշները [1]: Այն ձեռքբերումները, որոնք մեծ դժվարությամբ հիմնավորվել էին դպրոցներում, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում, մատնված են անհաջողության: Հայ հանրային կյանքից դուրս մղվեցին ազգային, կրոնական, բարոյական կենցաղավարման Sportedu.am

շատ արժեքներ: Դրա հետևանքով առաջացավ գաղափարական հսկայական դասարկություն[10]:

Ներկայումս ֆիզիկական կուլտուրայի դասերին հստակ չի շեշտադրվում դաստիարակչական խնդիրները և կարծես դրանք մղված են հետին պլան, մինչդեռ ֆիզիկական դաստիարակությունը սովորողների մոտ ենթադրում է այնպիսի կարևոր համամարդկային հատկությունների ձևավորում, ինչպիսիք են՝ ընկերասիրությունը, ազնվությունը, մարդասիրությունը, կարեկցանքը, փոխօգնությունը և այլն: Այս բոլորը առաջադրում են անդրադարձ կատարել ոչ հեռավոր անցյալում հայ երեխաների ֆիզիկական դաստիարակության դերին և նշանակությանը [3]: Վերոգրյալը փաստում է մեր հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել հայ մտավորականների կարծիքը և դիրքորոշումը երեխաների ֆիզիկական դաստիարակության մասին:

Հետազոտության խնդիրները:

1. Ներկայացնել հայ մտավորականների՝ Փ. Բյուզանդի, Լ. Ամիրխանյանի, Ղ. Աղայանի և այլոց հայացքները երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ: 2. Բացահայտել Վարդան Հացունու կողմից բնութագրված

երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրները և բովանդակությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ վերլուծել և ընդհանրացնել մեր հետազոտությանն առնչվող գրական աղբյուրները, հարցազրույց:

Կատարվել է մասնագիտական գրական աղբյուրների ուսումնասիրություն: Հետազոտությունը կազմակերպվել է Երևանի Ն.Վ.Գոգոլի անվան 35 հիմնական դպրոցում, որին մասնակցել են 7-9-րդ դասարանի 50 աշակերտներ:

Վ. Հացունու գործունեությունը նորովի մեկնաբանման անհրաժեշտություն ունի: Դպրոցականների հետ հարցազրույցում պարզվեց, որ նրանք իրազեկված, ծանոթ չեն Վ. Հացունու կենսագործունեության, նրա մանկավարժական հայացքների մասին: Երեխաներին ներկայացրեցինք Վ. Հացունու արժեքավոր մտքերը երեխաների հոգևոր և մտավոր, զինվորական դաստիարակության վերաբերյալ՝ միաժամանակ կարևորելով մայրական դաստիարակությունը:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Երեխաների դաստիարակության ընդհանուր համակարգում իր ուրույն տեղն ունի ֆիզիկական դաստիարակությունը, որն անքակտե-

լիորեն կապված է մտավոր, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, իրավական և այլ դաստիարակության հետ: Գիտնականները փաստում են՝ այն սկսվել է դեռևս քաղաքակրթության արշալույսին՝ տոհմական համակարգում [4,7,9]:

Ինչպես դաստիարակության մյուս կողմերը, այնպես էլ ֆիզիկական դաստիարակության հիմքը դրվում է ընտանիքում. այդ եղել է անցյալում և առավել ևս ներկայում: Անձի ձևավորման սկզբնական ժամանակաշրջանում այն գալիս ֆիզկուլտուրայի արժեքների ձևավորման և փոխանցման հիմնական օղակն է [11]:

Հայ մտավորականներ՝ Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Բաֆֆին, Ղ. Աղայանը և այլք առանձնակի են կարևորել ֆիզիկական դաստիարակությունը անձի համակողմանի զարգացման գործում:

Այսպես՝ Ղ. Աղայանը (1963) գրում է. «Դաստիարակության միակ նպատակը պիտի լինի զարգացնել մարդու երեք կողմերի (ֆիզիկական, մտավոր, բարոյական) միասնությունը, որպեսզի նա լինի ուժեղ, խելոք և առաքինի» [11]:

Դեռևս 1872 թվականին Ամիրխանյանցը գրել է. «Եթե դպրոցում չկա ֆիզկուլտուրա, ապա նա չի կարող հասնել իր նպատակին: Ֆիզկուլտուրան

միայն ներդաշնակ, ֆիզիկական և բարոյական միջոց չէ: Այն նույնքան կարևոր է, որքան կարևոր են հայոց լեզուն և մաթեմատիկան»: Եվ պատահական չէ, որ ավելի քան 100 տարի առաջ Սանասարյան վարժարանում շաբաթական ուսումնական օրակարգում ֆիզկուլտուրայի, մաթեմատիկայի, լեզունների դասերին հատկացվում էին հավասարաչափ քանակությամբ ժամեր:

Փավստոս Բուզանդը, նախ վկայելով, որ Մամիկոնյանները մանկուց ստանում էին մտավոր և ֆիզիկական կրթություն՝ «զիրահանգ հոգէպես և մարմնապէս», որ Մամիկոնյաններից Արտավազդը շատ քաջ, ուժեղ և ճարպիկ մարդ էր, Գայլ Վահանի որդի Սմբատը ոչ ոքի չէր զիջում քաջությամբ և ուժով, այնուհետև իր պատմության վերջում հիշատակելով անապատներում, քարանձավներում բնակվող մարդկանց «ուսուցիչ և առհասարակ տեսուչ» Գինդի մասին, գրում է, որ նա և աշակերտները «շրջում էին բոպիկ ոտներով..., նեղվում, տառապում, չարչարվում էին..., ենթարկվում էին ցրտի և տոթի, քաղցի և ծարավի՝ Աստծու սիրո համար: Նրանց մեջ կային աշակերտներ, որոնք նմանվում էին իրենց վարպետին..., որոնց անուններն են Վաչակ, Արտույտ, Մարախ: Սրանց ընկերն էր Տրդատը»: Վերջինս «բնակություն էր հաստատել Տարոն գավառում, որտեղ իր համար եղբայրանոցներ

էր շինել»: Գինդի և նրա աշակերտների կյանքը հիշեցնում է հին հունական Սպարտա քաղաք-պետությունում գործող ֆիզիկական դաստիարակության համակարգը, ուր մարդկանց կոփում և դաստիարակում էր բնության դաժան արհավիրքների միջոցով:

Սակայն ներկա ժամանակաշրջանում սովորողների ֆիզիկական դաստիարակության ձևերը, միջոցները և մեթոդները մեծ մասամբ կորսված են և շատ դեպքերում գործնականում այն շատ քիչ է կիրառվում: Պատճառներից մեկն էլ այն է, որ մասնագետները քիչ են անդրադառնում հայ մտավորականների անչափ արժեքավոր գաղափարներին: Այդ նկատառումով մեր աշխատանքում փորձել ենք նկարագրել Վ. Հացունու հայացքները երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ: Քանզի նրա գործունեությունը նորովի մեկնաբանման անհրաժեշտություն ունի, վերաարժեքավորելու և վերագնահատելու խիստ անհրաժեշտություն:

Վ. Հացունին իր աշխատանքում «Դաստիարակությունը հին հայոց քով» (1923) առանձնակի ուշադրություն է դարձրել երեխաների ֆիզիկական դաստիարակության բովանդակությանը և դրանց նշանակությանը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունները,

որոնք ուղեկցվում են աշխատանքային հինգ փուլերով [5]՝

1. **առտնին դաստիարակություն (դայակ, դաստիարակ),**
2. **մարմնական և զինվորական կրթություն (ֆիզիկական դաստիարակություն),**
3. **հանդիսական ուսմունք (հրապարակ, որտեղ հանդիսատեսը բազմությունն է),**
4. **մարզական հրահանգներ (ֆիզիկական պատրաստություն),**
5. **զինվորական հրահանգներ (սուսերաձգություն՝ փոքր տեսակը՝ թուր, աղեղնավարություն (Հայկ Նահապետ) և այլ զինվորական հրահանգներ):**

Հայ ազնվական մանուկը լույս աշխարհ գալով՝ կարոտում էր 3 տեսակ սննդի՝ մարմնական, հոգևոր և մտավոր [2]:

Ծննդյան նախնական շրջանի ավարտմամբ՝ դայակը հրաժարվում էր իր պաշտոնից ու մանկանը հանձնում ծնողներին: Այստեղից սկսվում էր բուն կրթությունը և դայակին հաջորդում էր դաստիարակը: Զավակների կրթությանը թեև հետամուտ էր ու պահանջող, բայց նրա մեջ իրական բաժին չունի հայ իշխանը, և ամբողջ գործը հանձնված է դաստիարակին: Միայն մայրն էր, որ հսկում էր երեխաների դաստիարակությունը:

Կրոնական ու մտավոր դաստիարակությանը զուգընթաց և հավասար, հաճախ ավելի է պատանիների կողմից կարևորվել «մարմնոյ կրթությունը» (ֆիզիկական դաստիարակություն): Սրա մեջ մտնում էր շարժումն ու զվարճությունը.

Պախաճճամք. նշմարվում է պարսկերեն «պախ» արմատը, որը նշանակում է գեղեցկություն, և «ճճամ», որը մոտենում է թուրքերեն՝ գուցե պարսկաձին ճիճի՝ խաղալիք բառին:

Ի՞նչ տեսակ խաղալիքներ էին դրանք: Սրանք իրենց շրջապատող և իրենց ընտանի ձևերն են, արվեստից և առավելապես բնությունից վերցված: Այսպես՝ նրանց պախաճճամքն էին արձանիկները, զենքերի փոքրիկ նմանությունները, նվագարանոցը, արվեստի գործիքները, ծանոթ անասունները, թռչունները և այլն:

Խալարիկք. Ոսկեբերանի բնագրում համապատասխանում է հայերեն «մանկտվոյ խաղ» (մանուկների խաղ) բառին: Բարեբախտաբար մեզ հայտնի են՝ բավական թվով գեթ անվամբ մեր հայ խաղալիքները: Դրանք են՝ լիցք, գունդք, կողոփոցք, անիի, շոնչանն, ճագարանք, ճոճք, տապալի, նարտ, ճատրակ:

Հանդիսական ուսմունք. պատանին, երբ մեծանալով դառնում էր երիտասարդ, իր մեջ զգում էր նոր ուժերի

զարթնումը: Երիտասարդի սիրտը ցանկանում էր այնպիսի խաղեր, որոնց մեջ կար կորով և խստամբերություն: Այդ խաղերը կատարում էին հրապարակում՝ բազմության առջև: Քաղաքակրթության գործը եղավ՝ դրանց զանազանությունը և ճարտարությունը հին ազգերի մոտ: Եվ մենք գիտենք, որ մեր նախնիները այստեղ էլ ուրիշներից հետ չեն մնացել.

Մարզանքները՝ ամրապնդել մարմինը և զինվորական կրթությունը (զինվորական պատրաստություն): Հայը այդ բոլորը դեռ մանկուց իր մեջ մարզում էր՝ «Խրատոս» կամ հատուկ ուսուցիչների առաջնությամբ, որոնց կոչում էին մարզիչներ:

Մարզիկները՝ վկայություններից հայտնի է, որ մարզական հրահանգներին ամբողջությամբ նվիրվածները գլխավորապես ազնվական դասակարգն էր, որ փարթամ և կենսական հոգսերից ազատ լինելով՝ կարող էր ողջ ժամանակը հատկացնել նույն զբաղմունքին: Հայ ազգի արական սեռն էր միայն, որ զբաղվում էր մարզական խաղերով, և կանայք ոչ մի կապ չունեին նրանց հետ, ինչպես հույն հանրապետություններից շատերն էին իրենց կանանց հեռու պահում մարզարաններից, հակառակ Սպարտայի, Քիոսի և ուրիշ դորիական քաղաքների՝ ուր նաև իգական սեռն ուներ իր մարմնական

կրթությունը (ֆիզիկական դաստիարակություն)՝ առանձին կամ պատանիների հետ խառը:

Դաստիարակները՝ ռամիկ դասից զարգացած անձինք էին: Բայց պատահում էր երբեմն, որ ազնվականն ինքնակամ նվիրվում էր այդ գործին. փոխանակ ինքը նրանց տանը բնակվելու, իր պալատի մեջ էր ընդունում ազատորդիք, իբրև ընդհանուր դաստիարակ՝ ընծայելով նրանց ամեն հանգստություն:

Մարզարանք՝ հանդիսական ուսման (մարզահրապարակ) մեծ մասը պահանջում էր հատկապես պարաստված վայրեր: Հույներն ունեին Պալեստրա՝ մարզական խաղերը հրահանգավորելու համար, ստադիոն կամ ասպարեզ, հիպոդրոմա կամ ձիընթացքը, թե-ատրոն կամ տեսարան, ուր ներկայացումներից բացի կատարում էին նաև մարզական խաղեր (ֆիզիկական վարժություններ):

Մեր նախնիներն ընդօրինակեցին հունական խաղերի զգալի մասը, բնականաբար, նաև՝ նրանց խաղարանները.

Նավասարդք կամ տարեմուտ՝ թե հեթանոսական, թե քրիստոնեական շրջանի ամենից հանդիսական ազգային տոնախմբություններից էր, մանավանդ Արշակունիների թագավորությամբ:

յան օրոք (Լդ., 100-400թթ.): Նավասարդք կամ Տոնք նավասարդաց տոնախմբությանը մասնակցում էին թագավորն իր ամբողջ բանակով, ազատանին և կաթողիկոսը՝ բազմաթիվ եպիսկոպոսների հետ: Այդ օրերի «ուրախությունը» ոչ միայն կրոնական հանդեսներն էին, այլև՝ գլխավորապես մարզական խաղերը:

Փաստերը տարակուսանք չեն հարուցում, որ Նավասարդքը համազոր էր հույն օլիմպիական խաղերին, եթե ոչ շրջանով, գոնե կարևորությամբ ու հանդիսականությամբ:

Մարզական հրահանգներ՝ մարզանքներ (մարզումներ), որոնց նպատակն էր զորացնել մարմինը և տալ նրան արագություն, պնդություն և դյուրաշարժություն: Սրանք են արդեն, որ քաղաքային լեզվով կազմում են բուն մարզումները: Ինչպես խաղերի տեսակները, այնպես էլ խաղալու ձևերն էին շատ: Այդ խաղերից էին՝

1. մանկական խաղ,
2. հասեվառիկ՝ վազելով հասնել մի տեղ և այնտեղից վերցնել ինչ-որ իր,
3. արշավան կամ դասական լեզվով՝ արշավանք (վազելու մրցություն),
4. վազք (ոստում՝ որոշ հեռավորությամբ)՝ նշանավոր էր պատանի Վարագդատ թագավորը,

5. ծանրաբարձություն՝ եղել են նաև տարբեր տեսակներ, օրինակ՝ սրունքներով ծանրությունը վեր բարձրացնելը (աչքի էր ընկնում Սմբատ Բագրատունին) և ոտքերով ծանրությունը մեջքին երկար տարածություն տեղափոխելը,

6. լող՝ առավել հայտնի էր Տրդատ թագավորը,

7. ըմբշամարտ՝ ունի զանազան ձևեր՝ ըմբշամարտ կռիվ, ըմբշամարտ մրցություն, մրցամարտ, գիրկընդխառն կռիվ կամ մարտ: Կար այսպիսի մի սովորույթ. յուրաքանչյուր մարզիչ սաստիկ վրեժխնդիր էր իր աշակերտների հաղթանակին և պահանջում էր նրանցից մեռնել պատվավոր անվամբ, քան թե պարտվել և ապրել վատանուն՝ ի վնաս նաև ուսուցչի անվան:

Կռփամարտիկ՝ այլ կերպ կոչվում էր նաև բռնամարտիկ, բռնամարտիկ կռիվ: Կար բռնցքամարտի զանազան տեսակներ, որոնք չեն միաբանում հայկական սովորությունները: Պանկրատիոն էր, որ խառնուրդն էր կռփամարտի և ըմբշամարտի:

Զինվորական հրահանգներ՝ հանդիսական ուսման այն մասը, որի նպատակն էր վարժեցնել հայ պատանուն զինավարժության, որպեսզի պատրաստ գտնվեր միշտ պաշտպանելու հայրենիքը: Եթե ռամիկ պատանին ժամանակ և դրություն (հնարավորություն) չունեի մարզական կրթությանը

(ֆիզիկական դաստիարակություն) հետևելու, ապա զինվորական հրահանգներին մասնակցում էր անվրեպ: Զինվորական հրահանգներից էին՝

1. սուսերածություն՝ (փոքր տեսակը՝ թուր), 4 դար (Արտավազդ Մամիկոնյան, Վարազդատ Արշակունին),

2. աղեղնավարություն՝ Հայկ Նահապետին աղեղնավոր էին կոչում,

3. նիզակահարություն (գեղարդ), որի հետ բռնում էին նաև վահան,

4. տեգընկեցություն՝ տեգը երկաթյա էր և նիզակից կարճ, բարդության մեջ օգտագործում էին տեգընկեցք, ձեռքով բռնած նետում էին թշնամու վրա,

5. պարսաքարություն՝ պարսատիկ գործիք կռվի և որսորդության մեջ, սահմանված էր քար նետելու համար (պարսաքարել կամ պարսել),

6. գլարձակություն՝ գիլը բավական սովոր և գետերի հոսանքի մեջ ողորկված և գնդացած քարեր են, որ բռնած նետում էին, այդ պատճառով կոչվում է բռնաքար, բռամբ նետելու քար,

7. հեծյալություն՝ ոսկեղեն հայերենի մեջ ձիընթաց էին կոչում ձի նստելու և արշավելու գործը, որը շատ կարևորություն ուներ հայ մարզվողների կարգի և զինավարժության մեջ,

8. որս՝ եղել է ցանկալի զբաղմունքը բոլոր ազգերի մեջ: Հայոց աշխարհում նույնպես այն իր բարձրության վրա է գտնվել:

Եզրակացություն: 1. Հետազոտությունում ներկայացված է հայ մտավորականների՝ Փ. Բյուզանդի, Լ. Ամիրխանյանի, Ղ. Աղայանի հայացքները՝ երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ, ներկայումս կարևորվում է դրանց կիրառման անհրաժեշտությունը երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

2. Վ. Հացունին առաջարկել է երեխաների ֆիզիկական դաստիարակության պայմանները, բովանդակությունը՝

առանձնացնելով 5 ուղղություն՝ **առտնին դաստիարակություն, մարմնական և զինվորական կրթություն, հանդիսական ուսմունք, մարզական, զինվորական հրահանգներ:**

3. Վերաարժևորելով հայ մտավորականների և Վարդան Հացունու կողմից առաջարկվող երեխաների ֆիզիկական դաստիարակության անհրաժեշտությանը՝ գալիս ենք այն եզրակացության, որ նախկինում երեխաների ֆիզիկական դաստիարակությունը եղել է զուտ նպատակ՝ առողջ, ուժեղ, խելացի, առնական մարզիկներ և մարտիկներ նախապատրաստելը՝ ընտանիքի, բարեկամի և հայրենի հողի պաշտպանության համար:

■ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Ա.Ա., Ֆիզիկական դաստիարակության տեսություն, Երևան, 2003, 160 էջ:

2. Վարդան Հացունի, Դաստիարակությունը հին հայոց քով, Վենետիկ, 1923, 90 էջ:

3. Մելիքսեթյան Ռ.Տ., Ղազարյան Ֆ.Գ., ֆիզիկական կուլտուրայի տեսության ընդհանուր հիմունքները, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 1987, 240 էջ:

4. Աթոյան Կ.Պ., ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում, Ուսումնական ձեռնարկ, Երևան, Լույս, 1985, 374 էջ:

5. Աղայան Ծ.Պ., Հայ ժողովրդի պատմության նկարզարդ ակնարկներ, Երևան, 1989, 318 էջ:

6. Ղազարյան Ֆ.Գ., Ստեփանյան Ա.Գ., Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013, 183 էջ:

7. Իսախրյան Մ.Ս., Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պատմություն, Երևան, 2002, 284 էջ:

8. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար 2 գրքով, գիրք 1-ին, Զանգակ – 97, 2005, 464 էջ:

9. Սահակյան Է.Ե., Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմություն, Ոսումնական ձեռնարկ, Երևան, 1993, 120 էջ:

10. Գրիգորյան Յու., Աբրահամյան Մ., Ֆիզկուլտուրա, հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Երևան, Աստղիկ գրատուն, 2023, 160 էջ:

11. Առաքելյան Վ.Բ., Ղազարյան Ֆ.Գ., Գրիգորյան Յու.Գ., Մինասյան Հ.Ս. և այլք, Ֆիզիկական կուլտուրա. ուսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների համար, Երևան, 2008, 184 էջ:

CONCEPTUAL VIEWS OF ARMENIAN INTELLECTUALS ON CHILDREN'S PHYSICAL EDUCATION

*E.L. Hovsepyan,
Physical education teacher at N.V. Gogol Primary
School No. 35, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: Physical and military education, Armenian intellectual thought, comprehensive child development, national traditions.

Research Relevance. Throughout history, societies have consistently sought to instill humanistic ideals in children, recognizing individual upbringing as one of the most significant social, psychological, and pedagogical challenges. Contemporary educational theory widely acknowledges that the future cultural and social development of any society depends not only on the knowledge, skills, and competencies acquired through formal education, but also on the social, moral, and universal values internalized by learners. Educational institutions and pedagogical systems therefore select key elements of moral culture and design educational programs that emphasize values such as honesty, humanity, solidarity, patriotic consciousness, political and legal awareness, discipline, and responsibility. Within this broader educational framework, physical education is regarded as an essential and integral component of the child's holistic development.

Aim of the study. To examine and systematize the perspectives and positions of Armenian intellectuals regarding the physical education of children.

Research Methods. The study employed the methods of analysis and generalization of primary and secondary sources relevant to the research topic, including documentary materials and interviews. A review of specialized scientific and pedagogical literature was conducted. The empirical component of the research involved approximately 50 students from grades 7–9 and was carried out at Yerevan N.V. Gogol Primary School No. 35.

Research Results Analysis. Physical education occupies a central position within the overall system of child upbringing and is closely interconnected with intellectual, moral, aesthetic, ecological, and legal education. Researchers emphasize that the origins of physical education can be traced back to the earliest stages of human civilization. As with other dimensions of upbringing, the foundational principles of physical education have historically been formed within the family environment and continue to be shaped there today. Prominent Armenian intellectuals such as Kh. Abovyan, M. Nalbandyan, Raffi, G. Aghayan, and others consistently underlined the role of physical education in the comprehensive development of the individual. G. Aghayan (1963) stated: “The sole objective of education should be the development of the unity of the three dimensions of the individual (physical, intellectual, moral), so that a person becomes strong, intelligent, and virtuous.”

The study also analyzes the views of V. Hatsuni, whose concepts of children’s physical education merit renewed interpretation and contemporary re-evaluation. In his work *Education in the Style of the Ancient Armenians* (1923), Hatsuni devoted particular attention to the structure, content, and significance of physical education, while carefully considering age-related characteristics of children’s development.

Conclusion. The present study outlines the views of Armenian intellectuals P. Byzand, Kh. Abovyan, M. Nalbandyan, Raffi, G. Aghayan, and others concerning children’s physical education and underscores the relevance of applying these principles within modern educational practice.

V. Hatsuni proposed specific conditions and content for children’s physical education, identifying five principal directions: home education, physical and military education, ceremonial instruction, sports education, and military training. A re-examination of the necessity and purpose of physical education as articulated by Armenian intellectuals and by V. Hatsuni leads to the conclusion that, historically, children’s physical education was primarily aimed at forming healthy, strong, intellectually

developed, and resilient individuals—athletes and warriors capable of protecting the family, the community, and the homeland.

АРМЯНСКАЯ ИНТЕЛЛИГЕНЦИЯ О ФИЗИЧЕСКОМ ВОСПИТАНИИ ДЕТЕЙ

Е.Л. Овсепян,

*Учитель физкультуры начальной школы
№ 35 им. Н.В. Гоголя, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: физическое и военное воспитание, армянская интеллигенция, всестороннее развитие детей, национальные традиции.

Актуальность исследования: Человечество на протяжении столетий прививало детям гуманистические идеи, и неслучайно воспитание личности является одной из важнейших социальных, психологических и педагогических задач каждого общества. Неслучайно в настоящее время широко распространено положение о том, что состояние дальнейшего развития и культуры общества всецело определяется не только тем, какие знания, умения и навыки приобретут учащиеся в результате обучения, но и тем, какими социальными, моральными и общечеловеческими ценностями они будут обладать. Школа и педагогика отбирают имеющиеся элементы нравственной культуры и создают программы и планы нравственного воспитания личности, в которых закладываются ценности благородного отношения к людям (честность, порядочность, гуманность, дружба и т. д.) на первый план выдвигаются проявления, воспитание патриотической, политической и правовой культуры, дисциплины и ответственности.

Цель исследования: 1. Описать мнение и позицию армянской интеллигенции по вопросу физического воспитания детей.

2. Объяснить особенности послеродового воспитания армянских принцев и детей-рамаиков, упомянутые Варданом Хацуни (от рождения до зрелого возраста).

Методы и организация исследования: Основным методом исследования был анализ и обобщение основных источников, связанных с нашим исследованием (интервью).

Было проведено исследование профессиональных научных источников. В исследовании приняли участие около 50 учащихся 7–9 классов. Исследование проводилось на базе начальной школы № 35 имени Н.В. Гоголя г. Еревана.

Анализ результатов исследования: Физическое воспитание занимает особое место в общей системе воспитания детей, неразрывно связанное с интеллектуальным, нравственным, эстетическим, экологическим, правовым и другими видами воспитания. Ученые утверждают, что оно зародилось на заре цивилизации, ещё в родовом строе.

Основы физического воспитания, как и других аспектов воспитания, закладываются в семье, как это было в прошлом, так и в большей степени в настоящем.

Армянские интеллигенты: Х. Абовян, М. Налбандян, Раффи, Г. Агаян и другие, придавали особое значение физическому воспитанию во всестороннем развитии человека. Так, Г. Агаян (1963) пишет: «Единственной целью воспитания должно быть развитие единства трёх сторон человека (физической, интеллектуальной, нравственной), чтобы он был сильным, умным и добродетельным».

В нашей работе мы попытались раскрыть взгляды В. Хацуни на физическое воспитание детей. Поскольку его труды нуждаются в новой интерпретации, в острой необходимости переосмысления и переосмысления. В. Хацуни в своей работе «Воспитание в стиле древних армян» (1923) уделил особое внимание содержанию физического воспитания детей и его значению с учётом возрастных этапов развития детей.

Краткие выводы.1. В работе представлены взгляды армянских интеллигентов П. Бюзанда, Х. Абовяна, М. Налбандяна, Раффи, Г. Агаяна и других на физическое воспитание детей и подчеркивается необходимость их применения в процессе физического воспитания детей сегодня.

2. В. Хацуни предложил условия и содержание физического воспитания детей, выделив 5 направлений: Домашнее воспитание, Физическое и военное воспитание, Обрядовое обучение, Спортивное обучение, Воинское обучение.

3. Переосмысливая необходимость физического воспитания детей, предложенную армянскими интеллектуалами и Варданом Хацуни, мы приходим к выводу, что в прошлом физическое воспитание детей было направлено исключительно на подготовку здоровых, сильных, умных, мужественных спортсменов и воинов ради семьи, друзей и родины для защиты почвы.

Տեղեկություններ հեղինակի մասին

Եղշատ Լևիկի Հովսեփյան՝ մարզիչ-մանկավարժ, Ն.Վ. Գոգոլի անվան 35 հիմնական դպրոցի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, Երևան, Հայաստան,

E.mail: egshathovsepyan@gmail.com

Information about the author

Yeghshat Leviki Hovsepyan, trainer-pedagogue, physical education teacher at N.V. Gogol Primary School No. 35, Yerevan, Armenia, E.mail: egshathovsepyan@gmail.com

Հոդվածն ընդունվել է 03.11.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 04.11.2025–ին:

Գրախոս՝ դոցենտ Յու Գրիգորյան